ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0060Ա. 28.04.20

28 ապրիլի 2020 թվականի թիվ 60 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

2020 թ. ապրիլի 29
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

Մակրոտնտեսական հատված. Մակրոտնտեսական կայունության պահպանման պայմաններում, 2019 թվականին շարունակվել է տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը: Տարվա արդյունքում տնտեսական աճը կազմել է 7.6 տոկոս, ինչը 2.4 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից և 2.7 տոկոսային կետով՝ ՀՀ պետական բյուջեի տարեկան ծրագրում նպատակադրվածից: Տնտեսական աճին հիմնականում նպաստել են ծառայությունների և արդյունաբերության ճյուղերում բարձր աճերը և փոքր չափով նաև շինարարությունը: Գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն:

Տնտեսական աճի բարձր մակարդակի պայմաններում, ՀՀ պետական բյուջեի կատարումը, հարկաբյուջետային կանոնների պահպանման սկզբունքի ներքո, առաջնորդվել է պետական պարտքի կայունության ապահովման նպատակի իրագործմամբ: Արդյունքում, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է, որին նպաստել է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի տարվա համար նախատեսված մակարդակից ավելի մեծ չափով կրճատումը: Վերջինիս նպաստել է նաև պետական ծախսերի կատարման բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարության կողմից պետական ծախսերի կրճատման ուղղությամբ վերանայումների շարունակական իրականացումը, ինչպես նաև ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված հարկային վարչարարության բարելավման ազդեցությունը: Նշված քաղաքականության արդյունքում, համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը զսպող է եղել՝ պայմանավորված եկամուտների զգալի զսպող և ծախսերի ընդլայնող ազդակների ձևավորմամբ:

Զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում ՀՀ կենտրոնական բանկն արձագանքել է գնաճային զարգացումներին՝ շարունակելով վարել խթանող դրամավարկային քաղաքականություն. տարվա ընթացքում երկու անգամ իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ պահպանելով տոկոսադրույքների ցածր մակարդակը: Տոկոսադրույքների ցածր մակարդակի պահպանումը, ուղեկցվելով տնտեսության վարկավորման ծավալների բարձր աճով, նպաստել է համախառն պահանջարկի աճին: Արդյունքում՝ 2019 թվականի տնտեսական աճի ձևավորմանը մեծամասամբ նպաստել է ներքին ծախսումների՝ հատկապես մասնավոր սպառման զգալի աճը՝ 12.8 տոկոս:

---

[1] Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները վերցված են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունից:

2019 թվականին արտաքին հատվածի զարգացումները նախորդ տարվա նկատմամբ բարելավվել են՝ պայմանավորված նախորդ տարվա նկատմամբ արտահանման աճի տեմպի արագացմամբ և ներմուծման աճի տեմպի դանդաղումով: Այսպես՝ 2019 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 10.3%-ով՝ նախորդ տարվա 2.9 տոկոսի նկատմամբ, իսկ ներմուծման ծավալներն աճել են 9.1%-ով՝ նախորդ տարվա 12.8 տոկոսի փոխարեն: Արտահանման աճին հիմնականում նպաստել են տնտեսության արտահանելի հատվածի, մասնավորապես՝ հանքարդյունաբերության ճյուղի արտադրական կարողությունների վերականգնումը, մշակող արդյունաբերության ճյուղում արտադրողականության աճը, ինչպես նաև ծառայությունների արտահանելի հատվածի աճը: Ներմուծման աճին նպաստելու տեսանկյունից, տարվա համար առանձնահատուկ էր ավտոմեքենաների ներկրման ծավալների կտրուկ աճը: Արդյունքում՝ 2019 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ որոշակի բարելավվել է:

Գնաճի զարգացումների վերաբերյալ նշենք, որ 2019 թվականի ընթացքում ցածր գնաճը պահպանվել է՝ պայմանավորված ինչպես հարկաբյուջետային քաղաքականության սպասվածից ավելի մեծ զսպող ընթացքի և արտաքին աշխարհից փոխանցված գնանկումային ազդեցություններով, այնպես էլ կառուցվածքային գործոններով, ինչպիսիք են՝ ապրանքային շուկաներում մրցակցության աճը և պահանջարկի տեղաշարժը կարճաժամկետ սպառման ապրանքներից երկարաժամկետ սպառման ապրանքներ: 2019 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 0.7%, իսկ միջին գնաճը՝ 1.4%: Տարվա ընթացքում ձևավորված ցածր գնաճը նպաստել է գնաճային սպասումների թուլացմանը՝ արտացոլվելով նաև շուկայական տոկոսադրույքների նվազման միտումներում: Այսպես՝ տարվա ընթացքում նվազել են պետական պարտատոմսերի տոկոսադրույքները և տնտեսությանը տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Հատկանշական է, որ տարվա ընթացքում եկամտաբերության կորի նվազումն արձանագրվել է պետական պարտատոմսերի ծավալների զգալի ավելացման պարագայում:

Հարկաբյուջետային հատված. Հարկաբյուջետային զսպող քաղաքականության շարունակական իրականացմանը զուգահեռ, 1.3 տոկոսային կետով նվազել է 2019 թվականի ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը և կազմել 50 տոկոս: Ընդ որում, պետական պարտքի կառուցվածքում ներքին աղբյուրների տեսակարար կշռի աճի վերջին տարիներին արձանագրված միտումները պահպանվել են նաև 2019 թվականին: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ տոկոսադրույքների նվազման և ցածր գնաճի վերջին տարիներին ձևավորված մակրոտնտեսական միջավայրում նպաստավոր պայմաններ են ստեղծվել պետական պարտքի կառավարման բարելավման համար: Մասնավորապես, ոլորտում վերջին տարիների ձեռքբերումները՝ կապված պարտքի կայունացման, ինչպես նաև կառուցվածքի բարելավման մասով, էապես կարևորվում են՝ դրանց հետագա

շարունակականության ապահովման և պարտքի հետ կապված ռիսկերի նվազեցման տեսանկյունից:

ՀՀ տնտեսական բարձր աճի և հարկային բարեփոխումների իրականացման պայմաններում, ՀՀ կառավարությունը տարվա ընթացքում վերանայել է ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրը՝ աճի ուղղությամբ[2]: Տարվա արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը կազմել է 16.7 տոկոս, իսկ հարկեր և տուրքերի գծով աճը՝ 16.4 տոկոս: Ընդ որում, հարկային եկամուտների նման բարձր աճի ապահովումը պայմանավորված էր ՀՀ կառավարության կողմից ստվերի կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ, հարկային վարչարարության բարելավմամբ, ինչպես նաև ավտոմեքենաների ներմուծման ծավալների աճով: Միևնույն ժամանակ, էական բարելավում է արձանագրվել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի գծով. նախորդ տարվա նկատմամբ 1.3 տոկոսային կետով աճել է այն և կազմել 22.3 տոկոս: Ընդ որում, հարկերի աճի նման բարձր ցուցանիշն ապահովվել է գերավճարների նվազեցման և տնտեսավարողներին ավելացված արժեքի հարկի հետ վերադարձման գործընթացի իրականացմանը զուգահեռ: Հարկ է նշել, որ հարկային ոլորտի նման բարելավումների պարագայում էապես կարևորվում է դրանց շարունակականության ապահովումը՝ իրական հիմքեր ապահովելով հարկային բեռի վերաբաշխման արդյունավետության և տնտեսության մրցունակության բարձրացման համար:

Առաջնորդվելով ՀՀ պետական ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակի իրագործմամբ՝ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարման գործընթացում շարունակվել է ծախսերի արդյունավետության բարձրացման քաղաքականությունը: Թեև ՀՀ պետական բյուջեի ծրագրված սահմանաչափերի նկատմամբ ծախսերը թերակատարվել են, սակայն նախորդ տարվա նկատմամբ ունեցել են աճի միտումներ և համախառն պահանջարկի վրա՝ փոքր ընդլայնող ազդեցություն: Այսպես՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 12.6 տոկոս կամ ՀՆԱ-ի մեջ 0.8 տոկոսային կետ՝ կազմելով ՀՆԱ-ի 24.9 տոկոսը: Սակայն հարկ է նշել, որ ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի գծով աճն արձանագրվել է թերակատարմանը զուգահեռ, ընդ որում, թերակատարումն առավել վառ դրսևորվել է կապիտալ ծախսերի մասով: Այսպես՝ 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են տարվա համար ճշտված ծրագրի 92.4 տոկոսը, որտեղ ընթացիկ ծախսերը կազմել են տարեկան ճշտված ծրագրի 95.8 տոկոսը, իսկ կապիտալ ծախսերինը՝ 73.3 տոկոս: Կապիտալ ծախսերի մասով նշենք նաև, որ այն կազմել է ՀՆԱ-ի 2.9 տոկոսը, որը ցածր է թե՛ 2019 թվականի, և թե՛ միջին ժամկետի համար նպատակադրված ցուցանիշներից: Ելնելով վերը նշվածից և հաշվի առնելով տնտեսական աճի պահպանման համար

---

[2] 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով, վերանայումների համաձայն, նախատեսվել է 112.6 մլրդ դրամ աճ, որից 86.8 մլրդ դրամը բաժին է ընկել հարկեր և տուրքերին:

կապիտալ ծախսերի մեծ ազդեցությունը՝ կարևորվում է առանձնակի ուշադրության արժանացնել ոլորտում առկա հիմնախնդիրների լուծումը և կապիտալ ծախսերի աճի համար կայուն հիմքերի ստեղծումը:

Հարկաբյուջետային զսպող քաղաքականության պայմաններում, 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա համեմատ նվազել է 41.4 մլրդ դրամով՝ կազմելով 63.9 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ 0.8 տոկոսային կետով նվազել է ՀՆԱ-ում պակասուրդի տեսակարար կշիռը՝ կազմելով ՀՆԱ 1 տոկոսը, ինչը զսպող ազդեցություն է ունեցել համախառն պահանջարկի վրա: Պակասուրդի նվազումն ուղեկցվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշռի ավելացմամբ, պարտքի տոկոսադրույքների նվազմամբ և ներքին պարտքի ժամկետայնության աճով:

Ամփոփում. Ամփոփելով նշենք, որ հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում 2019 թվականին իրականացված բարեփոխումները, որոնք արտահայտվել են հիմնականում ՀՀ պետական բյուջեի պակասուրդի նվազեցմամբ, ստվերային հատվածի կրճատմամբ և պետական ծախսերի բարեփոխումներով, դրական են անդրադարձել մակրոտնտեսական և պետական պարտքի կայունության պահպանման վրա: Այդուհանդերձ, շատ կարևոր է մակրոտնտեսական կայունության պահպանմանը զուգահեռ ապահովել արդյունավետ կապիտալ ծախսերի անհրաժեշտ ծավալների իրականացումը տնտեսության կայուն զարգացման հիմքերի ամրապնդման համար: